# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
# [illegible] ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
# ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/4

**ք. Երևան** **«19» մարտի 2018թ.**

**Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմն** ի դեմս աշխատակազմի ղեկավար **Նունե Խաչատրյանի**, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, **<Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն>** **ՊՈԱԿ**-ն, ի դեմս Ընկերության տնօրեն **Աշոտ Հայրապետյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **հատուկ ծառայողների վերապատրաստման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **75211200 (յոթանասունհինգ միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4 (չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ** | **«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ** |
| **Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8** | **Ք. Երևան, Կոմիտասի 152/ա** |
| **ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** | **[illegible] ՓԲԸ** |
| **Հ/Հ 900011194272** | **Հ/Հ 1930009611880100** |
| **ՀՎՀՀ 02506264** | **ՀՎՀՀ 02509478** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| | Կ.Տ. |

Հավելված N 1
« 19» մարտի 2018թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/4 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | Ծառայության մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 8051 1100 /1 | Ձեռքբերվող ծառայությունների անվանումը և նկարագիրը | դրամ | 67690080 | 1 | ՀՀ | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2018թ.՝ ըստ սույն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության քրեակատարողական ծառայողների վերապատրաստում | | | | | հավելվա<br>ժամանակացո<br>յցի |

Վերապատրաստման նպատակն է ապահովել քրեակատարողական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական և հետևողական կատարելագործումը: Ծառայությունը պետք է մատուցվի առավելագույնը թվով 540 քրեակատարողական ծառայողի համար, յուրաքանչյուր խումբ՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, յուրաքանչյուր օր՝ 6 կամ 8 ակադեմիական ժամ տևողությամբ՝ համաձայն ՀՀ արդարադատության նախարարի՝ 2018 թվականի հունվարի 22-ի N 10-Ա հրամանով հաստատված քրեակատարողական ծառայողների վերապատրաստման դասախոսությունների ու գործնական պարապմունքների ցանկի և ժամանակացույցի /հավելվածները կցվում են/, իսկ անցկացման կարգը՝ համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 2005 թվականի նոյեմբերի 18-ի N ՔՀ-67-Ն հրամանի: Յուրաքանչյուր խումբ կազմված է առավելագույնը 35 /երեսունհինգ/ ունկնդրից: Վերապատրաստման դասընթացները անցկացվելու են նաև 2 /երկու/ զուգահեռ խմբերով: Բոլոր ունկնդիրներին պետք է տրամադրվի գրենական պիտույքներ և հիգիենայի պարագաներ /վերջինս նախատեսված է գիշերակացով ունկնդիրների համար/ կից ներկայացվող ցանկի համաձայն, և վերապատրաստման բոլոր օրերին մատուցվի ճաշարանային սնունդ կից ներկայացվող ճաշացանկի /մենյուի/ համաձայն:

Ծառայությունը մատուցելու համար մասնակիցը պետք է ունենա՝

1. առնվազն 2 /երկու/ լսարան՝ յուրաքանչյուրը նախատեսված առնվազն 35 /երեսունհինգ/ ունկնդրի համար, հագեցած համապատասխան լսարանային գույքով /բարվոք վիճակում/,
2. առնվազն 30 /երեսուն/ ունկնդրի գիշերակացի կազմակերպման համար նախատեսված կացարան՝ առանձնացված սենյակներով /յուրաքանչյուրը նախատեսված մեկից մինչև չորս անձի համար/,
3. ճաշարան՝ համապատասխան գույքով և սպասքով /բարվոք վիճակում/, նախատեսված միաժամանակ 70 /յոթանասուն/ ունկնդրի սնունդ մատուցելու համար,
4. քրեակատարողական հիմնարկի ստանդարտներին համապատասխան խմտացիոն /ուսումնական/ բուժ. զննման ու հանձնումքի սենյակներ և բանտախուց, նախատեսված գործնական դասընթացների կազմակերպման համար:

Վերոնշյալ բոլոր պայմաններն ու գույքը պետք է տեղակայված լինեն միևնույն կառույցում: Կառույցի՝ Երևան քաղաքից դուրս գտնվելու դեպքում՝ մասնակիցներին ապահովել նաև տրանսպորտով:

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | ավարտը |
| **13.08.2018թ.** | **30.11.2018թ.** |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | 8051 1100 /2 | **ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողների վերապատրաստում** | **7521120** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Վերապատրաստման նպատակն է ապահովել հարկադիր կատարողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական և հետևողական կատարելագործումը՝ համաձայն կից ներկայացվող հարկադիր կատարողների վերապատրաստման դասընթացների ծրագրի: Ծառայությունը պետք է մատուցվի առավելագույնը թվով 60 հարկադիր կատարողի համար, տասը աշխատանքային օրվա ընթացքում, յուրաքանչյուր օր 6 կամ 8 ակադեմիական ժամ տևողությամբ՝ համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հունվարի 22-ի N 10-Ա հրամանով հաստատված հարկադիր ծառայողների վերապատրաստման ժամանակացույցի /հավելվածը կցվում է/, իսկ անցկացման կարգը և պայմանները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 10-ի N 154-Ն որոշման: Խումբը կազմված է առավելագույնը 60 /վաթսուն/ ունկնդրից: Բոլոր ունկնդիրներին պետք է տրամադրվի գրենական պիտույքներ և հիգիենայի պարագաներ /վերջինս նախատեսված է գիշերակացով ունկնդիրների համար/ կից ներկայացվող ցանկի համաձայն, և վերապատրաստման բոլոր օրերին մատուցվի ճաշարանային սնունդ կից ներկայացվող ճաշացանկի /մենյուի/ համաձայն:<br>Ծառայությունը մատուցելու համար մասնակիցը պետք է ունենա՝<br>1. 1 /մեկ/ լսարան՝ նախատեսված առնվազն 60 /վաթսուն/ ունկնդրի համար, հագեցած համապատասխան լսարանային գույքով /բարվոք վիճակում/,<br>2. առնվազն 30 /երեսուն/ ունկնդրի գիշերակացի կազմակերպման համար նախատեսված կացարան՝ առանձնացված սենյակներով /յուրաքանչյուրը նախատեսված մեկից մինչև չորս անձի համար/,<br>3. ճաշարան՝ համապատասխան գույքով և սպասքով /բարվոք վիճակում/, նախատեսված միաժամանակ 60 /վաթսուն/ ունկնդրի սնունդ մատուցելու համար,<br>Վերոնշյալ բոլոր պայմաններն ու գույքը պետք է տեղակայված լինեն միևնույն կառույցում:<br>Կառույցի՝ Երևան քաղաքից դուրս գտնվելու դեպքում՝ մասնակիցներին ապահովել նաև տրանսպորտով:<br>**Ծառայության մատուցման ժամկետը**<br>**Սկիզբը**: ***05.11.2018թ.***<br>**ավարտը**: ***16.11.2018թ.*** | | | | | **Պայմանա[illegible] ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2018թ.՝ ըստ սույն հավելվածի ժամանակացույցի** |

# ՑԱՆԿ

## Վերապատրաստման դասընթացների ունկնդիրներին տրամադրվող գրենական պիտույքների և հիգիենայի պարագաների

| Վերեպատրաստման յուրաքանչյուր ունկնդրի տրամադրվող | | | | |
|---|---|---|---|---|
| Ապրանքանյութական արժեքի անվանումը | | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Քանակը |
| 1 | Նոթատետր | Չափսը՝ A4, 70 թերթ միջուկը՝ 1+0, 80գ. օֆսեթ, կազմը՝ 4+0, գույնը՝ միագույն /առանց նկարազարդումների/, 300գ. կավճապատ, տակի շերտը առանց տպագրության 300գ. կավճապատ | հատ | 1 |
| 2 | Գրիչ | Գնդիկավոր, կապույտ միջուկով | հատ | 1 |
| **Վերապատրաստման գիշերակացով ունկնդրին լրացուցիչ տրամադրվող** | | | | |
| 1 | Օճառ | Չորսուների, կտորների կամ այլ ձևերով, քաշը՝ 100գ. անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ << առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված <<N 2-III-8. 2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրության և նավտանգության ներկայացվող հիգիենիկ պահանջների>> սանիտարական կանոնների և նորմերի | հատ | 1 |
| 2 | Զուգարանի թուղթ | Երկշերտ կամ եռաշերտ 9,8սմ*12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ. անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ << կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված <<Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>> | հատ | 1 |

# ՃԱՇԱՑԱՆԿ /ՄԵՆՅՈՒ/

## Վերապատրաստման դասընթացների ունկնդիրների

| N | Անվանումը | Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 1. | Ճաշարանային սննդի մատուցում գիշերակացով և առանց գիշերակացի ունկնդիրների համար | **1-ին աշխատանքային օր**<br>1. 08:30 – Վարսակի շիլա՝ 200գր., սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ՝ 30գր, ջեմ (տարբեր համերի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:<br>2. 11:20 - Սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածքաբլիթ՝ 100 գր., սեզոնային մրգեր՝ 150 գր., գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, աղբյուրի ջուր՝ 500 մլ.:<br>3. 13:00 – Սպաս՝ 400գր, հնդկաձավարով փլավ՝250գր, կոտլետ(տավարի մսով)՝ 150գր, աղցան «Կորեական»՝ 150գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ,բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.:<br>**2-րդ աշխատանքային օր**<br>1. 08:30 – Ձվածեղ՝ երկու ձվից պատրաստված., սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ՝ 30գր, ջեմ (տարբեր համերի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.<br>2. 11:20 - Սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածքաբլիթ՝ 100 գր., սեզոնային մրգեր՝ 150 գր., գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, աղբյուրի ջուր՝ 500 մլ.:<br>3. 13:00 – Բորշ(տավարի մսով) ընդհանուր 500գր՝ 350գր- ապուր, 150գր –փափուկ միս, կարտոֆիլի խյուս՝ 400գր, կաղամբով աղցան՝ 150գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ,բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.<br>**3-րդ աշխատանքային օր**<br>1. 08:30 – Սպիտակաձավարի շիլա՝ 200գր., սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ՝ 30գր, ջեմ (տարբեր համերի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.<br>2. 11:20 - Սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածքաբլիթ՝ 100 գր., սեզոնային մրգեր՝ 150 գր., գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, աղբյուրի ջուր՝ 500 մլ.:<br>3. 13:00 – Հավով ապուր ընդհանուր 500գր՝ 350գր- ապուր, 150գր –հավի փափուկ միս, սպագետտի՝ 250գր., տավարի մսով սոուս՝ 150գր, աղցան <<Վինեգրետ>>՝ 150գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ,բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.<br>**4-րդ աշխատանքային օր**<br>1. 08:30 – Մեկ հատ խաշած ձու և մեկ հատ խաշած երշիկ (հավի), սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ՝ 30գր, ջեմ (տարբեր համերի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.<br>2. 11:20 - Սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածքաբլիթ՝ 100 գր., սեզոնային մրգեր՝ 150 գր., գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, աղբյուրի ջուր՝ 500 մլ.:<br>3. 13:00 – Սնկով ապուր ընդհանուր 500գր՝ 350գր- ապուր, 150գր –սունկ, ուզբեկական փլավ հավի մսով ընդհանուր 400գր՝ 250գր-փլավ, 150գր-միս,կաղամբով աղցան՝ 150գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր. |

**5-րդ աշխատանքային օր**

1. 08:30 –Կաթնով՝ 200գր., սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ՝ 30գր, ջեմ (տարբեր համերի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.
2. 11:20 - Սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածքաբլիթ՝ 100 գր., սեզոնային մրգեր՝ 150 գր., զազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, աղբյուրի ջուր՝ 500 մլ.:
3. 13:00 – Ոսպով ապուր՝ 400գր, կարտոֆիլի տապակա՝ 350գր, նրբերշիկ (հավի)՝ 2հատ, բազուկով աղցան՝ 150գր, զազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.

**6-րդ աշխատանքային օր (շաբաթ)**

1. 08:30 – Վարսակի շիլա՝ 200գր., սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ՝ 30գր, ջեմ (տարբեր համերի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.:
2. 11:20 - Սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածքաբլիթ՝ 100 գր., սեզոնային մրգեր՝ 150 գր., զազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, աղբյուրի ջուր՝ 500 մլ.:
3. 13:00 – Սպաս՝ 400գր, հնդկաձավարով փլավ՝250գր, կոտլետ(տավարի մսով)՝ 150գր, աղցան «Կորեական»՝ 150գր, զազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ,բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.:

**7-րդ աշխատանքային օր**

1. 08:30 – Ձվածեղ՝ երկու ձվից պատրաստված., սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ՝ 30գր, ջեմ (տարբեր համերի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.
2. 11:20 - Սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածքաբլիթ՝ 100 գր., սեզոնային մրգեր՝ 150 գր., զազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, աղբյուրի ջուր՝ 500 մլ.:
3. 13:00 – Բորշ(տավարի մսով) ընդհանուր 500գր՝ 350գր- ապուր, 150գր –փափուկ միս, կարտոֆիլի խյուս՝ 400գր, կաղամբով աղցան՝ 150գր, զազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ,բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.

**8-րդ աշխատանքային օր**

1. 08:30 – Սպիտակաձավարի շիլա՝ 200գր., սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ՝ 30գր, ջեմ (տարբեր համերի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.
2. 11:20 - Սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածքաբլիթ՝ 100 գր., սեզոնային մրգեր՝ 150 գր., զազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, աղբյուրի ջուր՝ 500 մլ.:
3. 13:00 – Հավով ապուր ընդհանուր 500գր՝ 350գր- ապուր, 150գր –հավի փափուկ միս, սպագետտի՝ 250գր., տավարի մսով սոուս՝ 150գր, աղցան <<Վինեգրետ>>՝ 150գր, զազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ,բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.

**9-րդ աշխատանքային օր**

1. 08:30 – Մեկ հատ խաշած ձու և մեկ հատ խաշած նրբերշիկ, սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ՝ 30գր, ջեմ (տարբեր համերի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.
2. 11:20 - Սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածքաբլիթ՝ 100 գր., սեզոնային մրգեր՝ 150 գր., զազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, աղբյուրի ջուր՝ 500 մլ.:
3. 13:00– Սնկով ապուր ընդհանուր 500գր՝ 350գր- ապուր, 150գր –սունկ,ուզբեկական փլավ հավի մսով ընդհանուր 400գր՝ 250գր-փլավ, 150գր-միս,կաղամբով աղցան՝ 150գր, զազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.

**10-րդ աշխատանքային օր**

| | | | |
|---|---|---|---|
| | | | 1. 08:30 – Կաթնով՝ 200գր., սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, կարագ՝ 30գր, ջեմ (տարբեր համերի)՝ 80գր, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 100գր.<br>2. 11:20 - Սև թեյ կամ լուծվող սուրճ՝ 200մլ, թխվածքաբլիթ՝ 100 գր., սեզոնային մրգեր՝ 150 գր., գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, աղբյուրի ջուր՝ 500 մլ.:<br>3. 13:00 – Ռսպով ապուր՝ 400գր, կարտոֆիլի տապակա՝ 350գր, երշիկ (հավի)՝ 2հատ, բազուկով աղցան՝ 150գր, գազավորված ըմպելիք (տարբեր համերի)՝ 500մլ, բարձր որակի սպիտակ ցորենի ալյուրից պատրաստված հաց՝ 200գր.<br><br>➢ Կատարողը պարտավորվում է վերոնշյալ մենյուին համապատասխան Ծառայությունը մատուցել Հայաստանի Հանրապետությունում գործող հանրային սննդի համար նախատեսված սանիտարահիգիենիկ, սանիտարահամաճարակային, ինչպես նաև հանրային սննդի մատուցման (ներառյալ մատուցման ջերմաստիճանը), պահպանման, տեղափոխման և այլ բնույթի նորմերին, կանոններին ու տեխնիկական հրահանգներին համապատասխան:<br>➢ Կատարողը պարտավորվում է յուրաքանչյուր օրվա մենյուին համապատասխան Ծառայությունը մատուցելուց առաջ փորձանմուշներ վերցնել պատրաստի խոհարարական արտադրանքից (ներառյալ՝ թեյից, սուրճից, թխվածքից, հյութից և այլն) և դրանց պահպանման համար Հայաստանի Հանրապետությունում գործող նորմերին համապատասխան դրանք պահպանել առնվազն 48 ժամ և կարիք առաջանալու դեպքում դրանք ներկայացնել Պատվիրատուին կամ Հայաստանի Հանրապետության պատկան մարմիններին՝ փորձաքննություն իրականացնելու նպատակով: Կատարողը պարտավոր է նաև Ծառայության մատուցման հետ կապված սննդամթերքի և հարակից այլ ապրանքների գնման, փորձաքննության, սերտիֆիկացման, տեղափոխման և այլ բնույթի փաստաթղթերը պահպանել առնվազն մեկ տարի ժամկետով և կարիք առաջանալու դեպքում դրանք ներկայացնել Պատվիրատուին կամ Հայաստանի Հանրապետության պատկան մարմիններին՝ փորձաքննություն իրականացնելու նպատակով: |

# ԾՐԱԳԻՐ*
# ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

| Թեմա | | Ունկնդրի աշխատանքի ծավալը / ակադեմիական ժամ / | | |
|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | այդ թվում դասախոսություն | այդ թվում գործնական պարապմունքներ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | ՀՀ սահմանադրական կարգի հիմունքները | 4 | 4 | |
| 2 | Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները | 2 | 2 | |
| 3 | Միջանձնային հարաբերությունների հոգեբանական ասպեկտները | 4 | 4 | |
| 4 | Պետական ծառայության դեմ ուղղված որոշ հանցագործություններ | 4 | 4 | |
| 5 | Արդարադատության դեմ ուղղված որոշ հանցագործություններ | 2 | 2 | |
| 6 | Հայ Դատի վերջին զարգացումները | 2 | 2 | |
| 7 | «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի որոշ առանցքային հիմնադրույթներ | 22 | 18 | 4 |
| 7.1 | Պարտապան իրավաբանական անձանց գույքի և դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու կարգը և առանձնահատկությունները (ՍՊԸ, ՓԲԸ,ԲԲԸ,ՊՁ) | 4 | 2 | 2 |
| 7.2 | Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու առանձնահատկություններն ու բռնագանձում տարածելը | 2 | 2 | - |
| 7.3 | Ալիմենտի վճարման և բռնագանձման կարգը | 2 | 2 | - |
| 7.4 | Ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը կամ բռնագրավելը | 4 | 2 | 2 |
| 7.5 | Որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալու առանձնահատկությունները | 2 | 2 | - |
| 7.6 | Վարչական վարույթի ընդհանուր կանոնների կիրառելիությունը կատարողական վարույթում | 2 | 2 | |
| 7.7 | Վարչական ակտերով բռնագանձումների առանձնահատկությունները | 4 | 4 | - |
| 7,8 | Գույքի ուղղակի վաճառքը | 2 | 2 | - |
| 8 | Պարտապանի և (կամ) նրա գույքի հետախուզմանն ուղղված գործողությունները | 6 | 4 | 2 |
| 9 | «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի որոշ առանցքային հիմադրույթներ | 8 | 8 | - |
| 9.1 | Հարկադիր կատարողի սոցիալական երաշխիքները | 2 | 2 | - |
| 9.2 | Հարկադիր կատարողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները | 2 | 2 | - |
| 9.3 | Հարկադիր կատարողի վարքագծի կանոնները | 4 | 4 | - |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կատարողական վարույթում | 12 | 12 | - |
| 10.1 | Դատական ակտերի հարկադիր կատարման ավտոմատացման համակարգի ներդրումը | 6 | 6 | - |
| 10.2 | Հարկադիր էլեկտրոնային աճուրդի միջոցով պարտապանի գույքի իրացումը դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից | 2 | 2 | - |
| 10.3 | Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունում | 2 | 2 | - |
| 10.4 | Էլեկտրոնային վճարային համակարգերի համակցմամբ կառավարման էլեկտրոնային համակարգի կողմից կատարվող ավտոմատ գործողությունները, կիրառման սկզբունքներն ու արդյունավետությունը | 2 | 2 | - |
| 11 | ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության համագործակցությունն այլ պետական մարմինների հետ | 2 | 2 | - |
| 12 | Հակակոռուպցիոն ռազմավարությունը ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունում | 2 | 2 | - |
| 13 | Հարկադիր կատարման համակարգերը որոշ արտասահմանյան երկրներում | 2 | 2 | - |
| | Ընդհանուր | 72 | 66 | 6 |

*Ծրագրում փոփոխություններ կատարելու դեպքում Պատվիրատուն պարտավորվում է դասընթացների մեկնարկից առնվազն տասը օր առաջ գրավոր տեղեկացնել Կատարողին: Ծրագրի ընդհանուր ակադեմիական ժամը փոփոխման ենթակա չէ:

# ՑԱՆԿ

## քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների

| | Թեմա | Ունկնդրի աշխատանքի ծավալը /ակադեմիական ժամ/ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | Այդ թվում | | |
| | | | Դասախոսություն | Գործնական պարապմունք | Դերային խաղեր |
| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 1. | **Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների էությունն ու առանցքային բնութագրիչները** | 4 | 4 | | |
| 2. | **Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթեր** | 6 | 4 | 2 | |
| *2.1* | *Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռների քննարկում, խմբային աշխատանք* | *3* | *2* | *1* | |
| 2.2 | *Սպամբրույան արձանագրության էությունը և խոշտանգումների ու այլ տեսակի դաժան վերաբերմունքի քննության և փաստաթղթավորման նվազագույն ստանդարտները.* | *3* | *2* | *1* | |
| 3. | **Կոռուպցիայի դեմ պայքար և հակակոռուպցիոն ռազմավարություն** | 4 | 2 | 2 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *3.1* | *Կոռուպցիան որպես սոցիալ-իրավական երևույթ, դրա հատկանիշները* | *2* | *2* | | |
| *3.2* | *Կոռուպցիոն հիմնախնդիրները քրեակատարողական ծառայությունում: Խմբային աշխատանք* | *2* | | *2* | |
| **4.** | **Հանրային կապեր (PR)** | **10** | **6** | **2** | **2** |
| **4.1** | *Հանրային կապերի (PR) էությունը և ինստիտուտները* | *1* | *1* | | |
| **4.2** | *Գրավոր նամակագրություն, ուղերձներ, հեռախոսային զանգեր և դրանց արդյունավետության բարձրացման մեթոդներ* | *2* | *1* | *1* | |
| **4.3** | *Քաղաքացիների հետ անմիջական և միջնորդավորված շփումներ* | *2* | *1* | *1* | |
| **4.4** | *Գործնական և ոչ գործնական հանդիպումների (ներառյալ քաղաքացիների հետ) և բանակցությունների կազմակերպման ոճային առանձնահատկությունները, կոնֆերանսների և մամլո ասուլիսների կազմակերպում և մասնակցություն* | *3* | *1* | | *2* |
| **4.5** | *Քրեակատարողական ծառայության և ծառայողի իմիջի (ոճի) ձևավորման մեթոդները* | *2* | *2* | | |
| **5.** | **Քրեակատարողական ոլորտում հանդիպող ագրեսիայի հետ տարվող աշխատանքներ** | **8** | **3** | **2** | **3** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **5.1** | *Ագրեսիայի հասկացությունը, փեսակները, նպաստող գործոնները և հիմնական փեսությունները* | *2* | *1* | *1* | |
| **5.2** | *Ագրեսիայի կանխարգելում և կառավարում* | *4* | *1* | | *3* |
| **5.3** | *Առարկությունների հետ աշխատելու լինգվիստիկ մեթոդներ* | *2* | *1* | *1* | |
| **6.** | **Քրեակատարողական ծառայությունը** | **6** | **2** | **2** | **2** |
| ***6.1*** | *Քրեակատարողական ծառայության կազմակերպումը: Քրեակատարողական ծառայողի պաշտոնեական երաշխիքներն ու սահմանափակումները:* | *2* | *1* | *1* | |
| ***6.2*** | *Քրեակատարողական ծառայողի կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելը: Իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր* | *4* | *1* | *1* | *2* |
| **7.** | **Պենիտենցիար համակարգի հիմնախնդիրներն ու մարտահրավերները** | **6** | **4** | **2** | |
| **7.1** | *«Դատավճռի կատարում» և «Պատժի կատարում» եզրույթների գիտապրակտիկ նշանակությունն ու առանձնահատկությունները* | *3* | *2* | *1* | |
| **7.2** | *Պատիժը կատարելիս առկա հիմնախնդիրները և առաջարկվող հնարավոր լուծումները* | *3* | *2* | *1* | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **8.** | **Հայաստանի Հանրապետության պենիտենցիար քաղաքականության էությունը** | **8** | **6** | **2** | |
| 8.1 | *Պենիտենցիար քաղաքականության «վրեժի» և «անձի վերասոցիալիզացիայի» առանձնահատկություններն ու էությունը* | *3* | *2* | *1* | |
| 8.2 | *Պրոբացիայի ծառայության էությունը* | *3* | *2* | *1* | |
| 8.3 | *Պենիտենցիար քաղաքականության կապը հանրային ոլորտի այլ քաղաքականության հետ* | *2* | *2* | | |
| **9.** | **Կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը** | **4** | **4** | | |
| **10.** | **Կառավարչական հմտություններ** | **6** | **3** | **3** | |
| 10.1 | *Մարդկային ռեսուրսների կառավարում և ազդեցության հոգեբանություն* | *2* | *2* | | |
| 10.2 | *Կոմունիկացիաների և կառավարչական որոշումների նշանակությունը կառավարման գործընթացում, կառավարման աշխատանքների արդյունավետությունը* | *2* | | *2* | |
| 10.3 | *Կառավարչական որոշումների ընդունման հոգեբանություն* | *2* | *1* | *1* | |
| **11.** | **Կոնֆլիկտների կառավարում** | **8** | **3** | | **5** |
| 11.1 | *Կոնֆլիկտի հասկացությունը և տեսակները* | *1* | *1* | | |
| 11.2 | *Սթրեսի հաղթահարման տեխնիկաներ* | *4* | *1* | | *3* |
| 11.3 | *Լարվածությունը նվազեցնելու հմտություններ* | *3* | *1* | | *2* |
| **12.** | **Մարդու թրաֆիքինգ** | **2** | **2** | | |
| 12.1 | *Թրաֆիքինգի հասկացությունը* | *1* | *1* | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12.2 | *Թրաֆիքինգի տեսակները, հարկադիր աշխատանքը քրեակատարողական հիմնարկներում* | *1* | *1* | | |
| | **Ընդամենը** | 72 | 43 | 17 | 12 |

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարի
2018 թվականի հունվարի 22-ի
N 10-Ա հրամանի

**ՑԱՆԿ**

**քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման, պահպանության ապահովման, հատուկ նշանակության, հերթապահության բաժինների և հերթապահ խմբի ծառայողների վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների**

| | Թեմա | Ունկնդրի աշխատանքի ծավալը /ակադեմիական ժամ/ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | Այդ թվում: Դասախոսություն | Գործնական պարապմունք | Դերային խաղեր |
| 1. | **Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների էությունն ու առանցքային բնութագրիչները** | 6 | 5 | 1 | |
| 2. | **Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթեր** | 8 | 5 | 3 | |
| 2.1 | *Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռների քննարկում, խմբային աշխատանք* | *3* | *2* | *1* | |
| 2.2 | *Սպամբոլյան արձանագրության էությունը և խոշտանգումների ու այլ տեսակի* | *5* | *3* | *2* | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *դաժան վերաբերմունքի քննության և փաստաթղթավորման նվազագույն ստանդարտները.* | | | | |
| 3. | **Կոռուպցիայի դեմ պայքար և հակակոռուպցիոն ռազմավարություն** | 4 | 2 | 2 | |
| *3.1* | *Կոռուպցիան որպես սոցիալ-իրավական երևույթ, դրա հատկանիշները* | *2* | *1* | *1* | |
| *3.2* | *Կոռուպցիոն հիմնախնդիրները քրեակատարողական ծառայությունում: Խմբային աշխատանք* | *2* | *1* | *1* | |
| 4. | **Քրեակատարողական ծառայողի դեոնտոլոգիա, մասնագիտական կերպար (պրոֆեսոգրամա)** | 4 | 3 | 1 | |
| 5. | **Ուժի գործադրումը քրեակատարողական համակարգում** | 4 | 2 | 2 | |
| 5.1 | *Քրեակատարողական ծառայողի կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք գործադրելը: Իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր* | *2* | *1* | *1* | |
| 5.2 | *Ուժի գործադրումը Եվրոպական բանտային կանոնների համատեքստում* | *2* | *1* | *1* | |
| 6. | **Խումբ-1**<br>**Ծանրոցների և նմանատիպ այլ առարկաների զննման ռենտգենոգրաֆիկ համակարգերի հետ աշխատելու մեթոդաբանությունն ու առանձնահատկությունները («Ռապիսկան» ինտրոսկոպ)** | 12 | 4 | *8* | |
| 6.1 | **Խումբ-2**<br>**Պենիտենցիար համակարգի հիմնախնդիրներն ու մարտահրավերները** | 6 | 4 | 2 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6.1.1 | *«Դատավճռի կատարում» և «Պատժի կատարում» եզրույթների գիտապրակտիկ նշանակությունն ու առանձնահատկությունները* | *3* | *2* | *1* | |
| 6.1.2 | *Պատիժը կատարելիս առկա հիմնախնդիրները և առաջարկվող հնարավոր լուծումները* | *3* | *2* | *1* | |
| 6.2 | **Անվտանգության և պահպանության ապահովումը քրեակատարողական ծառայությունում** | **6** | **4** | **2** | |
| 6.2.1 | *Անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը: Իրավիճակային խնդիրներ:* | *3* | *2* | *1* | |
| 6.2.2 | *Պահպանության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը: Իրավիճակային խնդիրներ, դերային խաղեր:* | *3* | *2* | *1* | |
| 7. | **Կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը** | **4** | **3** | **1** | |
| 8. | **Հանրային կապեր (PR)** | **4** | **3** | **1** | |
| 8.1 | *Գրավոր նամակագրություն, հեռախոսային զանգեր և դրանց արդյունավետության բարձրացման մեթոդներ* | *2* | *1* | *1* | |
| 8.2 | *Քրեակատարողական ծառայության և ծառայողի իմիջի (ոճի) ձևավորման մեթոդները* | *2* | *2* | | |
| 9. | **Քրեակատարողական ոլորտում հանդիպող ագրեսիայի հետ տարվող աշխատանքներ** | **3** | **2** | **1** | |
| 9.1 | *Ագրեսիայի կանխարգելում և կառավարում* | *1* | *1* | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9.2 | *Առարկությունների հետ աշխատելու լինգվիստիկ մեթոդներ* | *2* | *1* | *1* | |
| **10.** | **Քրեակատարողական հիմնարկներում արգելված իրերի ապօրինի շրջանառության կանխումը և դրա դեմ պայքարը** | **6** | **2** | **2** | **2** |
| 10.1 | *Քրեակատարողական հիմնարկներում թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխարգելման առանձնահատկությունները* | *3* | *1* | *1* | *1* |
| 10.2 | *Քրեակատարողական հիմնարկներում արգելված իրերի ապօրինի շրջանառության դեմ պայքար* | *3* | *1* | *1* | *1* |
| **11.** | **Հայաստանի Հանրապետության պենիտենցիար քաղաքականության էությունը** | **8** | **6** | **2** | |
| 11.1 | *Պենիտենցիար քաղաքականության «վրեժի» և «անձի վերասոցիալիզացիայի» առանձնահատկություններն ու էությունը* | *3* | *2* | *1* | |
| 11.2 | *Պրոբացիայի ծառայության էությունը* | *3* | *2* | *1* | |
| 11.3 | *Պենիտենցիար քաղաքականության կապը հանրային ոլորտի այլ քաղաքականության հետ* | 2 | 2 | | |
| **12.** | **Քրեական ենթամշակույթ (Բանտային սուբկուլտուրա)** | **4** | **4** | | |
| 12.1 | *Քրեական ենթամշակույթի էությունը, դրա էքսպանսիայի համար բարենպաստ պայմանների բացահայտման ու կանխարգելման մեթոդներն ու գործիքները* | 2 | 2 | | |
| 12.2 | *Հանցավոր մականունները, դաջվածքները և ժարգոնն որպես* | 2 | 2 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | «բանկային» ենթամշակույթի փարրեր | | | | |
| 13. | **Կոնֆլիկտների կառավարում** | **3** | **2** | | **1** |
| 13.1 | *Կոնֆլիկտի հասկացությունը, տեսակները լարվածությունը նվազեցնելու հմտություններ* | *3* | *2* | | *1* |
| 14. | **Մարդու թրաֆիքինգ** | **2** | **2** | | |
| 14.1 | *Թրաֆիքինգի հասկացությունը* | *1* | *1* | | |
| 14.2 | *Թրաֆիքինգի տեսակները, հարկադիր աշխատանքը քրեակատարողական հիմնարկներում* | *1* | *1* | | |
| | **Ընդամենը** | **(խումբ-1՝ 72) (խումբ-2՝ 72)** | **(խումբ-1՝45) (խումբ-2՝49)** | **(խումբ-1՝24) (խումբ2՝20)** | **(խումբ-1՝3) (խումբ-2՝3** |

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարի
2018 թվականի հունվարի 22-ի
N 10-Ա հրամանի

**քրեակատարողական ծառայության կազմ-վերլուծական, իրավական և միջազգային հարաբերությունների, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների ծառայողների վերապատրաստման դասախոսությունների և գործնական պարապմունքների**

| Թեմա | | Ունկնդրի աշխատանքի ծավալը /ակադեմիական ժամ/ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | Այդ թվում | | |
| | | | Դասախոսություն | Գործնական պարապմունք | Դերային խաղեր |
| | | 3 | 4 | | |
| 1. | **Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների էությունն ու առանցքային բնութագրիչները** | **4** | **4** | | |
| *2.* | **Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթեր** | **6** | **4** | **2** | |
| *2.1* | *Մարդու իրավունքները և հիմնարար* | *3* | *2* | *1* | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *ազատությունները:Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռների քննարկում, խմբային աշխատանք* | | | | |
| **2.2** | *Սպամբռյան արձանագրության էությունը և խոշտանգումների ու այլ տեսակի դաժան վերաբերմունքի քննության և փաստաթղթավորման նվազագույն ստանդարտները.* | *3* | *2* | *1* | |
| **3.** | **Կոռուպցիայի դեմ պայքար և հակակոռուպցիոն ռազմավարություն** | **4** | **3** | **1** | |
| ***3.1*** | *Կոռուպցիան որպես սոցիալ-իրավական երևույթ, դրա հատկանիշները* | *2* | *2* | | |
| ***3.2*** | *Կոռուպցիոն հիմնախնդիրները քրեակատարողական ծառայությունում: Խմբային աշխատանք* | *2* | *1* | *1* | |
| **4.** | **Քրեակատարողական ծառայողի դեոնտոլոգիա, մասնագիտական կեցվածք (պրոֆեսոգրամա)** | **4** | **3** | **1** | |
| **5.** | **Քրեակատարողական ծառայությունը** | **4** | **3** | **1** | |
| **5.1** | *Քրեակատարողական ծառայության կազմակերպումը: Քրեակատարողական ծառայողի պաշտոնեական երաշխիքներն ու սահմանափակումները:* | *2* | *1* | *1* | |
| **5.2** | *Քրեակատարողական ծառայությունում քաղաքացիական հատուկ ծառայությունը* | *2* | *2* | | |
| **6.** | **Պենիտենցիար համակարգի հիմնախնդիրներն ու մարտահրավերները** | **6** | **4** | **2** | |
| **6.1** | *«Դատավճռի կատարում». և «Պատժի կատարում» եզրույթների գիտապրակտիկ նշանակությունն ու առանձնահատկությունները* | *3* | *2* | *1* | |
| ***6.2*** | *Պատիժը կատարելիս առկա* | *3* | *2* | *1* | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *հիմնախնդիրները և առաջարկվող հնարավոր լուծումները* | | | | |
| **7.** | **Հայաստանի Հանրապետության պենիտենցիար քաղաքականության էությունը** | **8** | **6** | **2** | |
| **7.1** | *Պենիտենցիար քաղաքականության «վրեժի» և «անձի վերասոցիալիզացիայի» առանձնահատկություններն ու էությունը* | *3* | *2* | *1* | |
| **7.2** | *Պրոբացիայի ծառայության էությունը* | *3* | *2* | *1* | |
| **7.3** | *Պենիտենցիար քաղաքականության կապը հանրային ոլորտի այլ քաղաքականության հետ* | *2* | *2* | | |
| **8.** | **Հոգեբանական աշխատանքը դատապարտյալների և կալանավորված անձանց հետ** | **10** | **8** | **2** | |
| **8.1** | *Դատապարտյալների հետ իրականացվող հոգեբանական աշխատանքների առանձնահատկությունները, միջազգային փորձը, պահանջները և արդի վիճակը* | *2* | *2* | | |
| **8.2** | *Դատապարտյալի անձի հոգեբանական ուսումնասիրությունները: Դատապարտյալի անձի ուղղվածությունը և գործունեության դրդապատճառները: Դատապարտյալի պահանջմունքների առանձնահատկությունները, ուղղվածությունը, բնավորության և խառնվածքի առանձնահատկությունները:* | *2* | | *2* | |
| **8.3** | *Դատապարտյալների հետ հոգեբանական աշխատանքի առանձնահատկությունները, ենթախմբերի բաժանելը, փիպավորելն ու բնութագրելը: Դատապարտյալների փիպոլոգիան* | *2* | *2* | | |
| **8.4** | *Պատժի կրման փևողությունը և դրա ազդեցությունը դատապարտյալների* | *2* | *2* | | |